



### ՀՊԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՐՅՈՎ ՊԻՏԻ ԿԱԶՄՈՒԻ 3ԱՆՁՆԱԽՈՒՄԸ ՄԵ ՇՈՒՐԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԳՈՐԾԱԴՐԵԼՈՒ

ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ ԷԼԻԱՍ ՄԸՐ

Մարտիններու Լիկայի առաջարկը, որ կը պահանջէր դադարեցնել լիբանանեան հպատակութիւն շնորհելու գործընթացը եւ որ Շուրայի պետական խորհուրդի կողմէ նախանշեալ օր ընդունուած էր միաձայնութեամբ եւ առիքնարկում ու վատերացում փոխանցուած էր ներքին գործոց նախարարութեան, երկէ ունեցաւ արձագանքներ:

Պատկերասփիւռի «Էլ. Պի. Սի.» կայանին հետ ունեցած հարցազրոյցի մը ընթացքին, ներքին գործոց նախարար Էլիաս Մըրը յայտնեց, որ լիբանանեան հպատակութիւն ստացած են հապարարուր մարդիկ, որոնցմէ շատեր ունեցած են ապօրինի գործունեութիւն եւ վեղծած են փաստաթուղթեր: Մըրը հաւաստեց, որ ներքին գործոց նախարարութեան պարտաւորութիւնն է յարգել եւ կիրարկել օրէնքը եւ հպատակութիւնը ետ առնել անոնցմէ: Ան ըսաւ նաեւ, որ նախարարութիւնը պիտի կապուի յանձնախումբ մը՝ անմիջապէս գործադրութեան դնելու Շուրայի որոշումը:

Մըրը յայտնեց, որ յառաջիկայ շաբթուան ընթացքին պիտի կապուի յանձնախումբ մը՝ անմիջապէս գործադրութեան դնելու Շուրայի որոշումը:

### ՊԵՐԸԼԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈ ՆԱԽԱՐԱՐՆԵՐ ՕՊԷՅՏԻ ԵՒ ՇՄԱՅԵՏԻ ՇԵՏ

Արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանացիներու հարցերու նախարար Ժան Օպէյտը երկէ ընդունեց Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Վինսթըն Պեթթը: Օպէյտը Պեթթին խնդրեց լիբանանցի առեւտրականներուն դիմաց ծանուցող արգելքները հարթել եւ շեշտեց, որ հարկէ Պեթթը ընդունելու ժամանակ Սայտայի մէջ լիբանանցի առեւտրականներուն լաւ վերաբե-

րում ցուցաբերել: Օպէյտը յայտնեց, որ ներկայիս արեւելահարց կամ արգելք գործողութիւններ ունեցաւ յուծելու համար լիբանանցի ներդրողներուն «Քէմփ Տոհա» (Քուէյթ) մուտքը արգելելու հարցը: Օպէյտը նկատել տուաւ, որ քուէյթեան իշխանութիւնները ոչ մէկ կապ ունին այս արգելքին հետ, այլ անիկա կապուած է ամերիկեան բանակին կողմէ Իրաքի դէմ պատերապմին ընթացքին որդեգրուած ապահովական միջոցառումներուն:

Մապուտ յայտնեց, որ ներկայիս արեւելահարց կամ արգելք գործողութիւններ ունեցաւ յուծելու համար լիբանանցի ներդրողներուն «Քէմփ Տոհա» (Քուէյթ) մուտքը արգելելու հարցը: Օպէյտը նկատել տուաւ, որ քուէյթեան իշխանութիւնները ոչ մէկ կապ ունին այս արգելքին հետ, այլ անիկա կապուած է ամերիկեան բանակին կողմէ Իրաքի դէմ պատերապմին ընթացքին որդեգրուած ապահովական միջոցառումներուն:

**ՆԱԽԱԳԱՀԸ ՔՆՆԱՐԿԵՑ ՏԵՂԵԿԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԱՐԶԻՆ ԱՌՆՉՈՒՈՂ ՀԱՐՅԵՐ**

Նախագահ Կոր. Էմիլ Լահուտ երկէ ընդունեց տեղեկատուութեան նախարար Միշէլ Սըմահան, որուն հետ քննարկեց երկրին ընդհանուր կացութիւնը, շրջանային իրադարձութիւնները եւ Լիբանանի կեցուածքը Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաութրիի Պէյրութ այցելութեան նկատմամբ:

Քննարկումի առարկայ դարձան յատկապէս տեղեկատուութեան առնչուող հարցեր եւ լիբանանեան լրատուամիջոցներու դերը հարցերը արծարծելու իրենց ոճով:

Սըմահան նշեց, որ հիմնուելով նախագահ Լահուտի ցուցումներուն, ինչպէս նաեւ կառավարութեան վերջին ժողովին ընթացքին տեղի ունեցած քննարկումներուն վրայ, ան պիտի տեսակցի լիբանանեան լրատուամիջոցներու պատասխանատուներու հետ, գործակցութեան նպատակով, որպէս չի լիբանանեան տեղեկատուական մարտնչութեան պատասխանատուութիւն ցուցաբերել:

### ՎԻՓԷՆԵՆ ՆԱՄԱԿ՝ ՀԱՄՄՈՒՏԻ

Պաշտպանութեան նախարար Մահմուտ Համմուտ երկէ նամակ մը ստացաւ Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Տոմիւնիք Տր Վիլֆիէնէն, ձեռամբ Լիբանանի մէջ Ֆրանսայի դեսպան Ֆիլիպ Լը Քուրթիէի: Տր Վիլֆիէն իր նամակով վերահաստատեց, որ Ֆրանսա իր երկխօսութիւնները պիտի շարունակէ լիբանանցի պաշտօնատարներու հետ՝ հասնելու համար այն կէտին, որ շրջանի ժողովուրդին յարգահովել իր երապած խաղաղութիւնը:

### «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ԱՅՍՕՐՈՒՄՆ 3ԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

- ժամը 8:30 Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն
- ժամը 8:45 «Աստղեր»
- ժամը 10:00 «Մշակութային լրատու»
- ժամը 11:30 Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ հայերէն
- ժամը 12:00 «Մաքուր պահեմը հայերէնը»
- ժամը 1:30 «Մամուլներու աշխարհ»
- ժամը 2:45 Կարգադրոյց ընկ. Յակոբ Հաւաթեանի հետ Երեւանի մէջ կայացած Ը. Յ. Դ. Հայ Դատի խորհրդաժողովին մասին
- ժամը 6:00 «Հայ երգաշարի»

### ՈՒՐՖԱՅԻ ՀԱՅՐԵՆԱԳՅԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

### ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՇՐԱԿԵՐ

Ուրֆայի Հայրենակցական Միութեան վարչութիւնը կը հրաւիրէ իր հայրենակիցները, անդամական ընդհանուր ժողովի, 16 Մայիս 2003, երեկոյեան ժամը 7:00ին, միութեան տան մէջ:

**ՕՐԱԿԱՐԳ.**  
- Վարչութեան երկամեայ գործունեութեան նկատմամբ արտաքին տեղեկագիրի գեկուցում:  
- Նոր վարչութեան ընտրութիւն:

**ԾԱՆՕԹ.** Երեկոյեան ժամը 7:30ին ներկայանալու թիւը մեծամասնութիւն պիտի համարուի: **ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

### ՍՈՒՐԲ ԵՒ ԱՆՍԱԿ ՊԱՏԱՐԱԳ

Լիբանանի Կաթողիկէ Վարժարաններու «Նախկին Սաներու Օր»-ուան առիթով կը պատարագէ՝

**ԵՂԻԱ Թ. Ծ. Վ. ԵՂԻԱՅԵԱՆ**  
Ս. ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵՋ  
Կիրակի, 11 Մայիս 2003, առաւօտեան ժամը 8:30ին: **ՇՐԱԿԵՐ**

### ՎԱՉԷ ԵՒ ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ

### ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ 2003-2004 ՏԱՐԵՇՐՁԱՆ

Վաչէ եւ Թամար Մանուկեան Հիմնարկութիւնը՝ 2002-2003 ուսումնական տարեշրջանին կրթաթոշակ յատկացուցած է 181 համալսարանական ուսանողներու: Հիմնարկութիւնը հաճոյք ունի յայտարարելու, թէ այս տարի եւս կրթանպաստ պիտի յատկացնէ ուսանողներու, որոնք կը փոփոխեն իր ժամը (full time) համալսարանական ուսման հետեւի 2003-2004 ուսումնական տարեշրջանին:

Կրթաթոշակի դիմումագիրները ստանալու համար՝ կրթանպաստ ստացող բոլոր նախկին ուսանողները, ինչպէս նաեւ նոր թեկնածուները պարտին ներկայանալ Հիմնարկութեան Գրասենեակը, 13 Մայիսէն մինչեւ 30 Մայիս 2003 (բացի Շարաթ օրերէն), կէսօրէ առաջ ժամը 11:00էն մինչեւ կէսօրէ ետք ժամը 5:00, ստորեւ նշուած հասցէին:

Վաչէ եւ Թամար Մանուկեան Հիմնարկութիւն Ժէլ Էլ Տիպ Հրապարակ, Մալլահ Սենթըր, Տրոյ յարկ <եռամայն> 04-713532

### ՎԱՉԷ ԵՒ ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ ԼԻԲՆԱՆԻ ԳՐԱՄԵՆԵԱԿ

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «Ռ. ԶԱՐԳԱՐԵԱՆ» ՄԱՍՆԱԾԻՂ**  
50ԱՄԵԱԿԻ ԱՌԹՈՎ ԶԵՆԱՐԿՆԵՐՈՒ ԶԱՐԸ  
Կը ներկայացուի  
**ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ԸՆԱՐ» ԵՒ «ԳԱՅԻԱՆԷ»**  
**ՊԱՐԱԽՈՒՄԲԵՐՈՒ ՀԱՄՈՅԹԸ**  
Գեղարուեստական ղեկավար եւ պարուստյոյ՝ **ՖԵԼԻՔՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ**  
Տեղի կ'ունենայ Շաբաթ, 31 Մայիս 2003, երեկոյեան ժամը ճիշդ 8:30ին, «MONNOT» բաւերասրահին մէջ, Թապարիս:  
● Տոմսերը ստանալու համար դիմել մասնաճիւղի վարչութեան:

### ՎԱՐՉԱՊԵՏԸ ՆԱԽԱԳԱՀԵՑ ԱՊՊՊԵՏԱԿԱՆԱՑՄԱՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԺՈՂՈՎԻՆ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երկէ առաւօտեան ժամը 9:00ին վարչապետարանին մէջ նախագահեց առաջադրականացման գերագոյն խորհուրդի ժողովին, ներկայութեամբ արդարութեան նախարար Պահիժ Թադոյաւայի, փոքրամասնական նախարար Մարուան Համարէի, աշխատանքի նախարար Ասապ Հարպանի, ելեմուրքի նախարար Տուպ Սիմիտայի, հաղորդակցութեան միջոցներու նախարար Ժան Լուի Քըրպահիի եւ խորհուրդի ընդհանուր քարտուղար Ղազի Եուսէֆի:

Հանդիպումին քննարկուեցան բոլորային հետաձայնի ընկերութիւնները առաջադրականացնելու թրթածարք եւ որոշուեցաւ յառաջիկայ շաբթուան ընթացքին կայացնել ժողով մը, շարունակելու այս քննարկումը:

### ՄԱՐԿԱԲԱԳԱՑ ԶԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԵՋ

Յառաջիկայ Կիրակի, 11 Մայիսին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ տեղի պիտի ունենայ Սարկաւազական ձեռնադրութիւն: Սարկաւազ պիտի ձեռնադրուի Դարվանցի սաներէն Տիգրան Աստիսեան, Սարգիս Պետրոսեան, Միհրան Պերթիզեան եւ Արթի Բէշիշեան:

### Զեռնարկութիւնը պիտի կատարէ եւ քարոզէ՝ ԳԵՐԸ. Տ. ԵՓՐԵՄ ԱՐԸ. ԹԱՊԱԳԵԱՆ

### Արարողութեան պիտի հանդիսակալէ՝ Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Սիրով կը հրաւիրուի հաւատացեալ ժողովուրդը՝ մասնակցի դառնալու ձեռնադրութեան հոգեպարար արարողութեան եւ իր ներկայութեամբ քաջալերելու ընծայեալ սաները:

ԴԻՒՄ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

### ԳՐԱԲՈՒԱԾ ՕՐ

**ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՄԵՍՐՈՊԵԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐՃԱՐԱՆ ԿԷՍՕՐՈՒԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ**  
LE BRISTOL  
Կիրակի, 22 Յունիս 2003

### ՀԱՐՅԱԶՐՈՅՑ «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»ԷՆ

Ը. Յ. Դ. Հայ Դատի մարմիններուն եւ յանձնախումբերուն պատուիրակութիւններուն մասնակցութեամբ Երեւանի մէջ 6 - 7 Մայիս 2003ին կայացած խորհրդաժողովին աշխատանքներուն մասին հարցազրոյց՝ ԸՆԿ. ՅԱԿՈԲ ՀԱՒԱԹԵԱՆԻ հետ. այսօր՝ Շաբաթ, 10 Մայիս 2003, կէսօրէ ետք ժամը 2:30ի լուրերէն անմիջապէս ետք:

### ՄԱՅՐԵՐՈՒ ՏՕՐ ԵՒ ՀԱՄԲԱՐՉՈՒՄ

Կազմակերպութեամբ՝ Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի Գեղոյ Հարպոյեան վարժարանի Ծնողական Օժանդակ Մարմինի  
● Վիճակաձգութիւն եւ անակնկալներ  
Երեքշաբթի, 27 Մայիս 2003 առաւօտեան ժամը 10:30ին, Ս. Խաչ եկեղեցոյ «Պետողեան» սրահին մէջ, Զալբա:

### ԳՐԱԲՈՒԱԾ ՕՐ

**L. ԵՒ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ ԱԶԳ. ԲՈՒԼԵՃ**  
28 Յունիս 2003  
**GRAND HILLS VILLAGE**

### ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Արցախի մէջ նահատակուած լիբանանահայ ազատամարտիկ Միտր Ջուլիաճեանի նահատակութեան 10ամեակին առիթով, Ազգային Առաջնորդարանի Ուսումնական Խորհուրդին հետ համախորհուրդ, նահատակ ազատամարտիկին ընտանեկան պարագաները հիմնեցին անոր յիշատակին նուիրուած աշակերտական ֆոնդ մը, որուն զուձարը այս տարի պիտի տրամադրուի շարադրական մրցանքի մը՝ լիբանանահայ միջնակարգ եւ երկրորդական վարժարաններուն համար:

Պատմական Ծուշիի ազատագրման 11ամեայ յաղթանակին զուգահեռ այս օրերուն, վստահ ենք, որ լիբանանահայ նահատակ ազատամարտիկին յիշատակին նուիրուած այս նախաձեռնութիւնը ազգային գիտակցութեան, հպարտութեան եւ հաւատքի նոր առիթ մը պիտի ընծայէ լիբանանահայ աշակերտութեան:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

### Ս. ՅԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻ ԷՇՐԵՅԻԷ

### ԲԱՐԵՐԱՐՆԵՐՈՒ ՅԻՇԱՍԱԿԻ ՕՐ

Անցեալ երեք տարիներուն, ամենուրեքին դարձաւ եկեղեցոյնս հաստատած Բարերարներու Յիշատակի Օրուան տօնախմբութիւնը: Նշեալ օրը առիթ մը եղաւ եւ պիտի ըլլայ կրկին յիշելու եւ մեծարելու մեր եկեղեցոյն հին եւ նոր բարերարները:

Այս տարի՝ Բարերարներու Յիշատակի Օրուան Ս. պատարագը, ննջեցեալ բարերարներու հոգեհանգիստը, յիշատակի ձեռնարկը՝ տեղի պիտի ունենան Կիրակի, 11 Մայիս 2003ին, Ս. Յակոբ եկեղեցոյն եւ «Տիրան Պապիկեան» սրահին մէջ:

Այս առիթով տեղի պիտի ունենայ նաեւ օրհնութիւնը Ս. Սեղանոյս դասի պատի նոր քանդակներուն՝ բարերարութեամբ մեծայարգ ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՍԱՐԳԻՍ ԵՒ ԺԻԼԻ ՊՈՒՍԱԵԱՆՆԵՐՈՒ:

Վերոյիշեալ արարողութեանց պիտի նախագահէ, հանդիսակալէ եւ քարոզէ՝

**ԳԵՐԸ. Տ. ԳԵՂԱՆ ԵՊՍ. ԽԱԶԵՐԵԱՆ**  
(Քարեջան՝ առաջնորդ Լիբանանի Հայոց թեմի)

Սիրով կը հրաւիրենք հին եւ նոր բարերարները եւ անոնց հարազատները, հաղորդուելու անոնց ոգեղեն ներկայութեան:

Ողորմէ՛ Տեր, եկեղեցի շինողներուն...  
Յաւիտենական յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցին:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՅԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

### ՄԱՀԱԶԴ

Տիկին Էլիզ Էմմէրեան  
Տիկին Վարդուհի Կիտցիներեան եւ դուստրը  
Տէր եւ տիկին Փանոս Ճերանեան եւ զաւակուրք  
Տէր եւ տիկին Ժան Մալեան եւ զաւակուրք  
Խաչիկեան ընտանիք  
Պատիկեան ընտանիք  
Հարիպեան ընտանիք  
Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց հօր, մեծ հօր, քուսրի եւ հարազատին՝

ՕՉԱՆ ԷՍՄԵՐԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 9 Մայիս 2003, կէսօրէ առաջ ժամը 11:00ին, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Շաբաթ, 10 Մայիս, կէսօրէ առաջ ժամը 11:00ին, Նոր Մարաշի Սրբոց Բառասնից Մանկանց եկեղեցոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

● Ներկայս ընդունիլ իբրեւ մահակոյ:  
● Ցաւակցութիւններ կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Պուրճ Համուտ:

Հ.Յ.Գ. ԼԵՄԻ «ԱՐԱՔՕ» ՄԱՍՆԱԾԻՂԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ

ԴՐՈՅԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՁԵՌՆԱՐԿ

Հայ ազատագրական պայքարին մէջ իր իրաւատուկ տեղն ու դերակատարութիւնը ունեցած մըրկածին Դրոյի յիշատակը վառ պահելու եւ անոր նուիրական ու խիզախ գործունէութիւնը նոր սերունդներուն ծանօթացնելու նպատակով, Հ.Յ.Գ. ԼԵՄԻ «Արաքօ» մասնաճիւղի կազմակերպութեամբ երէկ, 9 Մայիսի երեկոյեան ժամը 8:00ին, «Արաքած» ակումբին մէջ տեղի ունեցաւ հերոսին նուիրուած ձեռնարկ մը:


Ձեռնարկին բացման խօսքը արտասանեց «Արաքօ» մասնաճիւղի պատանեկան միութեան ատենապետ Դրո Մարգարեան: Ան շեշտեց, թէ մեր հերոսներն ու պատմութեան մէջ իրենց դերակատարութիւնն ունեցած անձեր պէտք է ծանօթացունին նոր ծաղկող սերունդներուն, որպէսզի կարելի

ըլլայ անոր սերունդէ սերունդ փոխանցել:

Հաստատելով, որ Դրո ու իր նմանները կերտեցին հայութեան նուիրական ուղին, սրբապան երթը, Դ. Մարգարեան ըսաւ, թէ պէտք է շարունակել այդ ուղին եւ քայլել Դրոներու ճամբով՝ ի խնդիր Հայ Դատի վերջնական յաղթանակին:

Գեղարուեստական բաժինով Դատի Գազանձեան արտասանեց Սիւսանի «Ես երգելով կ'ուզեմ մեռնիլ» քերթուածը, իսկ Հ.Յ.Գ. «Քրիստափոր» եւ «Հրայր Դժոխք» պատանեկան միութիւններուն պատանիները ներկայացուցին Դրոյի յիշատակին նուիրուած երգ:

Դրոյի կեանքին, անոր անցած ու կերտած ուղիին ու արձանագրած նուաճումներուն մասին խօսեցաւ



ՀԳԿ. Սարգիս Կիրակոսեան՝ խօսքի պահուն



Պատանիները՝ յեղափոխական երգեր կը մեկնաբանեն

Հ.Յ.Գ. ԼԵՄԻ «Արաքօ» մասնաճիւղի պատանեկան միութեան ատենապետ Դրո Մարգարեան, իսկ Հ.Յ.Գ. «Քրիստափոր» եւ «Հրայր Դժոխք» պատանեկան միութիւններուն պատանիները ներկայացուցին Դրոյի յիշատակին նուիրուած երգ:

Ան ըսաւ, թէ իր ծնունդով Դրո նուիրուած էր հայ ժողովուրդին ու անոր ազատագրական պայքարին: Սուրմալու գաւառին մէջ ծնած Դրո կը շնչէր ու կ'ապրէր պէնքի ու յեղափոխութեան ոգով:

Հայութեան նուիրուած իր կեանքով, Դրո շահած էր հայ ղեկավարներուն ու ժողովուրդին վստահութիւնը եւ սարսափմատնած էր բոլոր անոնք, որոնք կը փորձէին վնասել հայու-

թեան, ըսաւ բանախօսը: Զակատագրական օրերուն, պատերազմի թնդանօթներու ու կրակներուն մէջ խիզախութեամբ կանգնած ու պայքարած Դրո մասնաճիւղի կազմակերպիչները կը խոստովանէին իր կեանքի անհրաժեշտութիւնը եւ իր կեանքի անհրաժեշտութիւնը:

Ան ո'չ միայն պատերազմի դաշտի սպիտակ ձիւնը հանդիսացաւ, այլեւ հայ ազատագրական պայքարին մէջ իր անուընդուն անջնջելի արձանագրեց իր հանձարեղ ուսման գետ, հայրենուկապետ, կազմակերպչական տաղանդով օժտուած, քաջ ու անկեղծ ղեկավար, գործելով թէ՛ հայրենի հողին եւ թէ՛ Սփիւքի մէջ, եզրափակեց Ս. Կիրակոսեան:

Թամար Իսկէնեանի շուրջ վրայ նուագէն ետք ցուցադրուեցաւ Հ.Յ.Գ. ԼԵՄԻ «Արաքօ» մասնաճիւղին կողմէ պատրաստուած վիտեո-երկ մը, որ ներկայացուց Դրոյի կեանքը, գործունէութիւնը, հայ ժողովուրդին համար անոր նուիրելի աշխատանքն ու պայքարը:

- Թամար Իսկէնեանի շուրջ վրայ նուագէն ետք ցուցադրուեցաւ Հ.Յ.Գ. ԼԵՄԻ «Արաքօ» մասնաճիւղին կողմէ պատրաստուած վիտեո-երկ մը, որ ներկայացուց Դրոյի կեանքը, գործունէութիւնը, հայ ժողովուրդին համար անոր նուիրելի աշխատանքն ու պայքարը:

Arabic header with religious text and decorative elements.

Տեղական մամուլը երէկ լուսարձակ տակ առած է լիբանանեան ներքին կեանքը յուսով հարցեր, ինչպէս՝ հպատակութեան պարագան եւ մեքանիքի հարցը:

Միջազգային եւ շրջանային իրադարձութիւններուն առնչուած է այն երեւոյթին, յուսով թերթերը անդրադարձած են իրաքի դէմ պատժամիջոցները առկա լինելու ՄԱԿի Ապահովութեան խորհուրդին կողմէ կատարուելիք քննարկումին, շրջանին մէջ Փառլոյի շրջապտոյտին, ինչպէս նաեւ պաղեստինեան եւ իրաքեան շրջաններուն մէջ արձանագրուող պարագայներուն:

«Նահար» գրած է, թէ Շուրայի պետական խորհուրդը Մարոնիներու Լիկայի առաջարկը փոխանցեց ներքին գործոց նախարարութեան, որպէսզի վերատեսութեան ենթարկէ հպատակութեան վերաբերեալ հապարատը թղթածրարներ:

Ըստ թերթին, մեքանիքի հարցը հանդիսացաւ նախարարաց խորհուրդի քննարկումներուն առաջըրը, իսկ ՄԱԿի կ'արագացնէ դատական հարցերը: «Պայքար» նշած է, թէ Է.Ֆ. Պի. Այ. իր հետեւնալիս ինչպէս կը կարողանայ չմտնի ինչպէս է չըզպայլայի վրայ, իսկ ամերիկացի ծերակուտական մը կը պահանջէ Լիբանանի ու Սուրիան հսկողութեան տակ առնել:

Նասրալլա կը յայտարարէ. «Մեր կրօնքն ու գաղափարը պիտի չծախենք մեր իրաւունքները»:

Նախկին նախագահ Էլիսա Հըրաուի խօսելով հպատակութեան մասին, «Անուար» օրաթերթին կ'ըսէ. «Միայն սրբազրելը առաքելութիւնն է»:

«Մաֆի»-ի համաձայն, Շուրայի պետական խորհուրդը ընդունեց հպատակութեան սոնչութեամբ Մարոնիներու Լիկայի առաջարկը եւ վայն առ ի քննարկում ու վաւերացում փոխանցեց ներքին գործոց նախարարութեան:

«Քիֆահ Արապի» լուսարձակի տակ առած է այն պարագան, թէ նախարարաց խորհուրդը Օպէյտն ու Մըմահան կը լիպտորէ լուծելու համար Սէնտական Արաքիոյ դէմ տեղեկատուական արշաին պատճառով ծագած տագնապը:

Ըստ «Նահար»-ի, Է.Ֆ. Պի. Այ. հետեւնալիս թիւններ կը կատարէ չըզպայլայի ֆինանսաւորման շուրջ:

Մոսկուա այցելութիւնը Նայէֆ իշխան կը յայտարարէ, որ ահաբեկչական ցանցին անդամները «Քալիստ»-ի կը պատկանին: Իրաքեան իրադարձութիւններուն մասին «Լիոն» գրած է, թէ շուրայի քայլերը կ'առնուին իրաքեան նորակազմ վարչակարգի ապահովութեան եւ քաղաքական անկայունութեան վերջ տալու համար: Ուստի շինկըն Ապահովութեան խորհուրդին մէջ անդամի սպանութեան, ուրակոծեց իսրայէլեան քնակեցման վայր մը, գրած է «Լիոն» օրաթերթը:

«Մաֆի» գրած է, թէ իսրայէլի կ'ուսումնասիրէ Ապու Մազէնի կառավարութեան ցօրակցութիւնը յայտնելու հարցը:

Ըստ «Նահար»-ի, «Համաս»-ի մէկ անդամին սպանութեան ետք, պաղեստինեան ակումբը ինքնաշարժ մը պայթեցաւ իսրայէլեան շրջունը շուրայի մը դէմ: Պուշշատ լաւատես է իսրայէլեան քարտէսի իրագործումը:

Թերթը նշած է, թէ Շարուն կը յայտարարէ, թէ պատրաստ է առանց նախապայմանի քանակութեան սկսելու Սուրիոյ հետ: «Մուսաբապար» գրած է, թէ Գահիրէ «Համաս»-ի կողմէ իրազրուեցաւ:

Ըստ «Անուար»-ի, նախագահ Պուշշատը շրջան այցելութիւնը յառաջխաղացք կ'արձանագրէ ի խնդիր իսրայէլեան քարտէսի մարտը:

Ըստ «Անուար»-ի, նախագահ Պուշշատը շրջան այցելութիւնը յառաջխաղացք կ'արձանագրէ ի խնդիր իսրայէլեան քարտէսի մարտը:

Պաղտատի հանդիպումը ճամբան կը հարթէ իրաքեան փոխանցման կառավարութեան կազմութեան դիմաց, նշած է օրաթերթը:

Իր կազմակերպած սեմինարներուն ծիրին մէջ, «ՀԱՅՃԱՐ» Լիբանանի Հայ Արհեստավարներու Միութիւնը (ճարտարագէտներ եւ ճարտարապետներ) երէկ երեկոյեան ժամը 8:00ին կազմակերպեց Պուշշատի դիմագրաւած Հարցերուն նուիրուած իր երրորդ խորհրդակցական հանդիպումը՝ Հայկազեան համալսարանի հանդիսարանին մէջ:

Գործարարներու եւ շրջանին մէջ գործող հաստատութիւններու ներկայացուցիչներու ներկայութեամբ տեղի ունեցած սեմինարին ընթացքին քննարկուեցան իրանի դիմագրաւած ընկերային - տնտեսական խնդիրները, առեւտրական գործունէութեան, մանր արհեստներուն եւ արդիւնաբերութեան արձանագրած ընկերակազմութեան պատճառները, ինչպէս նաեւ անոնց յաջողութիւնը բարելաւորող պայմանները:

Հետագային մանրամասնօրէն կ'անդրադառնանք սեմինարի քննարկումներուն:

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՄՐՅԱՆԱԿ
Այսու կը հաղորդենք, որ ամեն տարի Լիբանանի հայ կաթողիկէ վարժարանները մեկնական աշակերտի առիթ փոխ տրուի այցելելու Հայաստան, ամառային արձակուրդի ընթացքին:

«ՎԱՆԱՅ ՉԱՅՆ» ԿԱՐԻՔԸ ՈՒՆԻ ՀԱՂՈՐԴԱՎԱՐՆԵՐՈՒ
«Վանայ Չայն» կարիքը ունի հաղորդավարներու՝ արական եւ իգական, որոնք պէտք է ունենան խօսակցական ձիւղ հայերէնի ընդունելի մակարդակ:

ՍՐԲՈՅ ՀՈՒՓՈՒՄԵԱՆՅ ՎԱՐԺԱՐԱՆ
2003 - 2004 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ
Տնօրէնութիւնն բաց կը յայտարարէ 2003-2004 դպրոցական տարեշրջանի արձանագրութիւնները, 5 Մայիս 2003էն սկսելով ամեն օր առաւօտեան ժամը 8:00էն 14:00, բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԼԻԲԱՆԱՆԻ ԾՐՁԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
ՇԱՇՆԱՆ ՇԱՇՆՈՒՐ ԾՆՆԴԵԱՆ 100ԱՄԵԱԿ
Կը բանախօսեն ՄԱՐՈՒՇ ԵՐԱՄԵԱՆ ԵՎ ԳՐԻԳՈՐ ՇԱՇՆԵԱՆ
Պեղարուեստական յայտագիր
Տեղի կ'ունենայ Կիրակի, 11 Մայիս 2003, առաւօտեան ժամը 11:30ին, «3. Տեր Մելքոնեան» թատերասրահին մէջ:


«ՎԱՆԱՅ ՉԱՅՆ»-Ի ՎԱՐՈՒՄՆ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ
Ժամը 8:30 Լիբանանեան մամուլի խորհրդակցութիւնը ընթերցում՝ արաբերէն
Ժամը 9:30 Զաղաքական լուրեր/հայերէն
Ժամը 10:00 Անթիլիասի Սրբ. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարէն Սրբ. պատարագի ուղղակի ձայնասփռում
Ժամը 12:30 Զաղաքական լուրեր/հայերէն
Ժամը 1:00 Ազգային-Յեղափոխական երգեր
Ժամը 2:30 Զաղաքական լուրեր/արաբերէն
Ժամը 3:00 «Սկաւտիկ ձայն»-ը
Ժամը 4:30 Զաղաքական լուրեր/արաբերէն
Ժամը 6:30 Զաղաքական լուրեր/հայերէն

ՅԱՏՈՒԿ ԱՌԻԹ ՄԷՆ ՄԱՐՔԻ ՄԷՉ
ԼԻԲԱՆԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ (CROIX ROUGE LIBANAISE)
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹ ՈՍԿՐԱՓՏՈՒՄԻ (OSTEOPOROSIS - WHOLE BODY) ԱՆՏԱՃԱՆԱՉՄԱՆ ԱՐՇԱԻՐ ԳՈՐԾԱԿՅԱԲԱՐ
ՄԵՆ ՄԱՐՔԻ ԿԵԴՐՈՆՆԵՐՈՒ ԸՅՏ (ԺԵՇԹԱՌԻ - ՉԱԼԵԱ) ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ ԴՐԱԿԱՆ ՄԵԾ ԱՐՁԱԳԱՆԳՈՎ ՄԱՅԻՍ ԵՒ ՅՈՒՆԻՍ ԱՄԻՍՆԵՐՈՒՆ ԱԼ:
ԸԱՅ ԸՏԱԲԵՐԸՈՒՈՂՆԵՐ ՆԱԵՒ ԿՐՆԱՆ ՕԳՏՈՒԻԼ ԱՅՍ ԱՌԻԹԵՆ, ԴԻՄԵԼՈՎ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՈՐԵԻԷ ԿԵԴՐՈՆ, ԱՄԲՈՂՁ ԼԻԲԱՆԱՆԻ ՏԱՐԱԾԵԻՆ, ԿՃԱՐԵԼՈՎ 100 ՏՈԼԱՐԻ ՓՈՒՄԱՐԵՆ ՄԻԱՅՆ 20 ՏՈԼԱՐ:
Որեւ պարզաբանութեան համար դիմել՝ ՄԵՆ ՄԱՐՔ՝ 01/566633 - 01/576565:



# Գրական Էջ

## ՆՐԱՄԱՆԱՇԱԿ ԵՒ ԲՈՎԱՆԴԱԿԱԼԻՑ



Գրական անհրաժեշտ է աւանդով, ինքնուրույն դիմագիծով եւ պատմական դերակատարութեամբ բնորոշուող հայրենի «Նորք» եւ «Գարուն» ամսաթերթերուն կողքին, վերջին տարիներուն սկսան հրապարակ իջնել մասնագիտական յստակ կարգաբով բնորոշուող այլ հրատարակութիւններ, որոնք, դժբախտաբար, սփւռաբան ապկալութիւն գրասէրներուն համար մեացի մը եւ ցարկ կը մնան անձանց ու անհասանելի հանգիւսներ:

Այս էջով շուրջ տարի մը առաջ ընթերցողին հրամցուած «Արտասահմանեան գրականութիւն» անուն բարգձմանակ գրականութեան հանդէսէն ետք, նոյնքան հետաքրքրական եւ ոչ նուազ որակաւոր «Գրամատուրգիայ» գրական-գեղարուեստական հանդէսի հազիւ մէկ թիւին (2001-2002 թիւ 4-5) ծանօթացած, երբ ընթերցողին ներկայացնելու նպատակով տակաւին կը շարունակէինք հետապնդել մէկ-երկու այլ թիւեր, լանկարծ, լիբանանահայ գրող մը ազնուաբար մեր տրամադրութեան տակ դրաւ իսկապէս բացառիկ եւ երազական ամէնէն ինքնուրույն ու շքեղ հանդէսներուն հետ մըրցող նրբաշաշկ ու բովանդակալից «Թուրքիկոն» հանդէսի երեք թիւեր: Կարելի չէր դիմանալ փորձութեան եւ, ամիսներէ յետոյ ներկայացման հերթի սպասող տարբեր-տարբեր հատորները պահ մը մոռցած, մենք ուզեցինք անպայման եւ օր առաջ էջ բանալ այս «գեղարուեստական-մշակութաբանական եւ արտասահմանային» ինքնուրույն ու հպարտութիւնը հմայ գրասէր ընթերցողին հետ բաժնելու համար:

Հրամցուած նուէրը իսկապէս բանկարծէր: Ուրախութիւնը՝ արտասարգօրէն եզակի: Եւ նոյնպէս... ցաւը: Կարելի չէր ըմբռնել, թէ արագ հաղորակութեանց այս բազմամիջոց եւ արդիական ժամանակներին, երբ մէկ կոնգրէսի հպումով աշխարհի հեռավորագոյն մասնագիտացող կամ հրատարակչական «գանձերու սնունդները կրնան բացուիլ աչքերուդ դիմաց, նման հպարտալիք հրատարակչութիւններ ինչպէս կրնան հետեւ եւ անձանց մնալ ոչ միայն Սփիւռքի գրասէր հասարակութեան, այլեւ՝ նոյնիսկ գրական ու մամուլ շրջանակներուն:

Չերկայտեցրէ: Արա Գուրագեանի գլխաւոր խմբագրութեամբ եւ Արամ Մեհրաբեանի տնօրէնութեամբ յոյս տեսնող «Թուրքիկոն» հանդէսը օժտուած է աշխարհի տարբեր ամիսներէն ընտրուած 16 մտաւորականներ հաշուող խմբագրական խորհուրդով մը, որ, անտարակոյս, իր արդար բաժինը ունի ձեռք ձգուած բացառիկ որակի մէջ: Թանկարժեք թուրքի վրայ ակնհասուն եւ բարձրանալիկ ձեւաւորումով իրականացած գունաւոր տպագրութիւնը եթէ «Թուրքիկոն» ի տեսնելի արտաքին հմայքը երաշխատորոգ միտաւոր ազգակն է, դժբախտ մը կամ երեւոյթի մը ծալքերը ամենայն բժախնդրութեամբ լուսարձակին տակ քննարկող համապարփակ մօտեցումը անոր հիմնական յատկանիշներէն մէկն է, չըսելու համար մայր արժանիքը:

Կեօքէյի, Ռընէ Շարի, Մարսիմիլիան Վոյշտիմի, Եղիշէ Չարեցի, Օսիպ Մանգեյշտեյնի, Մարկ Շագալի եւ այլ դժբախտ նուիրուած «Թուրքիկոն» ի էջերը մտաւորական լրջախնդրութեան, բժախնդրութեան եւ բարձր որակի ամէնէն պիբանախօս ապացոյցներէն են:

Կարդացէք Չարեցիի ծննդեան 105ամեակը նշող համարէն (1/4/2002) քաղուած եւ քովի սիւնակներով հրամցուած գոյգ նիւթերը եւ դուք համոզուելով պիտի համոզուիք, որ «Թուրքիկոն»ը բառին ամբողջական առումով գրական-գեղարուեստական եւ յետադարձ, մշակութային ճշմարիտ վայելք մը, եւ, իրերեւայիպիսին՝ արժանի է ամբողջական բաշխարհագրի:

Ս. ԿԻՐԱՎՈՍԵԱՆ

## ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ ՁԵՐԲԱԿԱԿԱԼՈՒԱԾԻ ԱՆԿԵՏԱ

- 1.- Ազգանուն - Չարենց
- 2.- Անուն, հայրանուն - Եղիշէ Աբգարի
- 3.- Ծննդեան օրը, քաղաքը, թիւ... ամիսը - 1897 թիւ
- 4.- Ծննդավայրը - Կարս
- 5.- Բնակութեան վայրը (հասցէ) - Երեւան, Սունդուկեան, 6
- 6.- Ջրաղմուկը, մասնագիտութիւնը - գրող
- 7.- Ծառայութեան վայրը եւ պարտականութիւնը կամ գրադմուքի ձեւը - չի ծառայում
- 8.- Անձնագիրը - «Չիլիչ նշուած չէ»
- 9.- Սոցիալական ծագումը - մանր բուրժուական ընտանիք
- 10.- Սոցիալական դրութիւնը - ծառայող, ա) մինչեւ յեղափոխութիւնը «Չիլիչ նշուած չէ», բ) յեղափոխութիւնից յետոյ - ծառայող
- 11.- Կրթութիւնը (ընդհանուր, մասնագիտական) - միջնակարգ
- 12.- Կուսակցականութիւնը (նախկինում եւ հիմա) - անկուսակցական
- 13.- Ազգութիւնը եւ քաղաքացիութիւնը (Հաստատութիւնը) - Հայկական ԽՍՀ
- 14.- Պահեստի զինուորական հաշուառման կարգը եւ որտեղ է գտնուում հաշուառման մէջ - Երեւանի զինուորական հաշուառման կէտ, կարգ 6
- 15.- Ծառայութիւնը սպիտակ կամ այլ հակայեղափոխական բանակներում, մասնակցութիւնը զինուած խմբերին եւ խորհրդային իշխանութեան դէմ ապստամբութիւններին (ե՛րբ եւ որպէս ինչ) - չեմ ծառայել
- 16.- Ի՞նչ հալածանքներ է ենթարկուել, խորհրդային իշխանութեան ժամանակ, դատուածութիւն, ձերբակալութիւն եւ այլն (ե՛րբ, ի՞նչ օրգանների կողմից եւ ինչի՞ համար) - 1926 թուականին ձերբակալուել եմ
- 17.- Ընտանիքի կազմը - կին՝ Չարեցի, 27 տարեկան, դուստրերս՝ Արփենիկ, 5 տարեկան, Անահիտ, 2 տարեկան

Չարեցիի յատուկ նշանները -  
 1. Արտաքին յատուկ նշանները -  
 2. Ու՛ր կողմից եւ ե՛րբ ձերբակալուել - Հայկական ԽՍՀ ՆԳՎԿԻ Գրք բաժնի կողմից 27/VI, 37 թ.  
 3. Որտեղ է կալանաւորուած - Հայկական ԽՍՀ ՆԳՎԿԻ ներքին բաժնի  
 4. Յատուկ նշանները -  
 Անկետան լրացնող աշխատակցի ստորագրութիւն 27/VII, 1937 թ.

Ծանօթագրութիւն.- Անկետան լրացուած է յստակ եւ ընթերցելի՝ ձերբակալուածի խօսքերից, ստուգուած է փաստաթղթերով:

## «ԵՍ ՄԻԱՅՆԱԿ ՄԱՐԴ ԵՄ»

Ոչ մէկի հենք եւ չեմ հաղորդակցում: Ես ոչ ոք չունեմ, եւ միայնակ մարդ եմ: 1935

ՀԱՐՑՈՒՄ.- Հետաքննութիւնը պարզել է, որ ձեր երկերում դուք անց էք կացրել ձեր հակայեղափոխական, ցեղախնայի ստակ հայեացքները: Դրանում դուք ձեզ մեղաւոր ցանաչու էք:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Դրանում ես ինձ մեղաւոր չեմ ճանաչում:

Հ.- Ձեր «Գիրք Գանապարհի» ժողովածուի «Պատգամ» բանաստեղծութեան մէջ ակրոստիքով դուք անց էք կացրել հետեւեւյ բովանդակութեան հակայեղափոխական, ցեղախնայի ստակ լոզունգը. «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւաքական ուժի մէջ է»: Ընդունու էք, որ այդ լոզունգը հակայեղափոխական, զաշնակցական է:

Պ.- Ընդունում եմ, որ իմ «Գիրք Գանապարհի»-ում, հրատարակուած 1934 թուին, «Պատգամ» բանաստեղծութեան մէջ երկրորդ տառերի կարգափոխումը եւ գրել եմ, «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւաքական ուժի մէջ է»: Բայց ես ամենեւին դա չեմ համարում հակայեղափոխական, զաշնակցական լոզունգ, որովհետեւ ես նկատի ունեմ ժողովուրդը հասկացութիւնը՝ սկզբունքօրէն տարբեր ազգ տերմինից, որը կիրառուել է զաշնակցականները:

Այդ բանաստեղծութիւնը գրուած է 1933 թուականին, երբ դրութիւնը Հայաստանի լեւնային շրջաններում, ինչպէս յայտնի է, աղէտալի էր, ինչն էլ իմ գրքի որոշ տեղերում, մասնաւորապէս այդ լոզունգում, օբյեկտիւ մասնաւորապէս Հայաստանի մեր յոռետեսական տրամադրութիւնների համար:

Հ.- Ու՛ր կողմից էք դուք պատրաստում փրկել միայն ժողովուրդին:

Պ.- Այն ղեկավարներից, որոնք Հայաստանի վերջնական դրութեան մեղաւորներն են: 1936

Երբ գրում եմ ընդհանուր հարցերի մասին, ես ներշնչուած եմ, իսկ երբ գրում եմ Հայաստանի մասին՝ ինձ յոռետեսութիւնն է պաշարում: Պէտք է թե՛ր եւ հետանալ:

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԱՍԱԽԱՉ ՎԱՐԳԱՊԵՏԱՆԻՆ ԿԱԼԱՆԱՌՈՐ ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԻ ԱՂԵՐՍԱՆՔ

Այսօր եւ բախտ ունեցալ ներկայանալու (հատուած 1933)

գլխաւոր դատարանին ինձ վաղաժամ կալանքից ազատ արձակելու գործով, որ յարուցուած էր բաշխիչ յանձնաժողովի կողմից, եւ խորը գունդակութեամբ յետի գլխաւոր դատարանի որոշումը՝ ինձ իՐԲԵԻ ՀՈՐԵԿԱՆ ՀԻՒԱՆԳՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿԱԼԱՆԱՌՈՐԻ՝ ուղարկել: Որքան հոգեկան հիւանդանոց բուժուելու: Ընկեր հանրապետական դատախազ՝ Նորին շնորհակալութիւն! Նորապէս զգացուած եմ այն միանգամայն մարդկային վերաբերմունքից, որ ցոյց է տալիս գէպի նուաստս խորհրդային արդարացի տրութիւնը! Չարմանալի արդարացի տրութիւն! Պատմութեան մէջ չտեսնուած! Միայն ես չեմ հասկանում, թէ ինչու ի փառս այդ արդարացի տրութեան տոնակատարութիւն ու երթեր չի կատարուած համաշն մարդկութիւնը: Ախ, իմար, տրամար մարդկութիւն! Այդ մարդկութեան գլուխը հարկաւոր է կտրել: Ցաւում եմ, որ նա մի գլուխ չունի, որպէսզի հնարաւոր լինի այդ ինչով գլուխը գլուխը մի անգամից կտրել: Եւ յետոյ խնդրում եմ յարգէք իմ այս փոքրիկ խնդիրը.- Ազատեցէք ինձ հոգեկան հիւանդների հիւանդանոցից! Ես ոչ միայն երեք, այլ 103 տարի համաձայն եմ նստել թէ՛ կողմ ցարական կատարուած, միայն ազատեցէք ինձ ձեր մեծահոգեւորութիւնից: Եւ ընդունեցէք իմ խորին շնորհակալութիւնը ձեր գանձմանալի եւ ձեռնախոտ արդարացի տրութեան համար:

Կալանաւոր ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ  
 18.1.1927 թուին  
 Երեւան- Ուղղիչ տուն

Այս փոքր նայիրեան աշխարհում եւ շատ թշնամիներ ունեմ: Առանց ձեր ազնիւ պաշտպանութեան նրանք ինձ կ'ուտեն: Դուք աւելի լաւ էք պատկերացնում ձեր երկրի ամբողջ յետամնացութիւնը: Չէ՛ որ ձեզ նոյնպէս ուղղում է ին կործանել, բայց նայիրեան աղիքը շատ նոյն գտնուեց այնպիսի մեծ մարդու համար, ինչպիսին Մ. Շահինեանն է: Բայց ինձ կարող եւ կործանել շատ հեշտ: Դուք գա ինձանից լաւ էք հասկանում: Այդ իսկ պատճառով շատ եմ խնդրում, յանուն այն լաւ վերաբերմունքի, որ դուք առ այսօր ցուցաբերում էք մեր մշակոյթի եւ գրականութեան մէջ ամէն մի արժէքաւորի հանդէպ, օգնեցէք ինձ: Եւ կրկին, վերջին անգամ, աղաչում եմ, օգնեցէք ինձ!

Ե. ՉԱՐԵՆՑ

# Չ Ա Ր Ե Ն Ց

Ամենամաստաւոր հարիւրամեակն է անցել դարը մեր հաւաքական գոյութեան վերջին կէս, հազարամեակի մղձաւանջից յետոյ ու նախորդ դարերից՝ ամենաաղէտաբերը: Երբ դարաբերի մեր բանաստեղծութեան պայծառ ու շողջողուն համաստեղծութեան ներկայացուցիչներին մէկն արդէն ասել էր այն, ինչ կարող էր ասել ու պէտք է ասէր, եկաւ նա, որ իրեն ախորժում է կոչել հազարադէմ ու բիւրանուն: Եկաւ՝ «աղօթքի պէս հեզ», «պոռնիկի պէս ընկած», «յանձնուած ամօթին ու ստին», «աստղային ծիրից» յանկարծ արձակուած «հրապոյտ հրթիռ», «կարող արիւնի» «կարմիր կրօնողով», «երեք գոյն ծիածանի» լուսախաղով, «կապուտաչեայ սիրուհու» հետ ամուսնանալու համար, «հաւաքակիչի խելագար խանդով» սրբնթաց նոյնպէս հեծած «պատմութեան քառուկներով» սլանալու, «չիօթ երգերով ու աղմուկներով» ստուռածակերպ մուսային դաւաճանելու որոգայթից ազատուող, «կայուն գիտութեան գրանիտայ գետին» ստեղծող իր անձով, գործով ու հանձնարելութեամբ:

Բարին յարաբերական է, գեղեցիկը՝ բացարձակ: Երբ բանաստեղծը իր համար անուն էր ընտրում՝ քմահաճութիւն էր բանեցնում, թէ՛ հայեցակէտ, միեւնոյն է, անգրադառնալու էր դրա իմաստին, հնարաւոր արձագանգին ու մանաւանդ սեփական վերաբերմունքին՝ այս երկրի շարին ու բարուն: Եւ ի հարկէ, զարմանալի է, որ այդ անունն հիմնուած ընկած բառը, դրանով բովանդակաւորած հասկացութիւնը ճակատագրական դարձաւ նրա համար, իսկ նա կրեց դա որպէս իր խաչը՝ արժանապատուութեամբ, վերին շնորհով օժտուած լինելու հաւատով եւ աշխարհի գեղեցկութիւնը շատացնելու վստահութեամբ:

«Որպէս լքուած թաւուրակի ձգուած մի լար...» տողով սկսուող «Մահուան տեսիլը» մահուան տեսիլներից առաջինը, իր թուազրուութեամբ եւս յատկանշականը (6.10.1920), պարզ վկայութիւն է այն բանի, որ Եղիշէ Չարենցը որպէս բանաստեղծները ոչ-ոք, ունի իր կոչման գիտակցութիւնը, կամաւորապէս է ընտրել իր ուղին ու պատրաստ է անմացորդ նուիրումով ու իր հանձարի չեղնողով հնչեցնել իր հազգանգը. «Թող ոչ մի գոհ չպահանջուի ինձից բացի...»:

Սա չի նշանակում, թէ դրանից յետոյ ասուած ամէն մի խօսք խստիւ համապատասխանում է սոյն ազգարարութեանը, ամենեւին ոչ. եղել են եւ վճատութեան պահեր, եւ հրճուածների վայրկեաններ, եղել է ոչ միայն մահուան յաճախանք, այլեւ կեանքի բերկանք. թուրութիւն, անկուս, գոհակցութիւն, համբողջանունը համբարախուրթեան կարօտ ու կոմունիստական ծամածուրթիւններ: Այս ամէնը եղել է անմիջապէս յետոյ եւ եղել է նրա հետ, որ մեր բանաստեղծներից ամենակազմակերպուածն էր ու ամենատարբերայինը միաժամանակ:

Իսկ դրանից առաջ նոյն պատեպատ գարկուողն էր, որ համատեղում էր իր մէջ ամբողջների երթի ու պայքարի շարքերում իր համես-

տագոյն դերը օժեպ, առանձնաշնորհալ եւ ի սկզբանէ պայծառափայլ երգչի տողերի հետ. «Էլի գարունը կը գայ, կը բացուի վարդը...»: Բայց ինչո՞ւ դու համեստագոյն անուանեցիր նրա դերը ամբողջների երթի ու պայքարի շարքերում: Որովհետեւ ես նկատի ունէի նրա անձնական մասնակցութիւնը, եւ ոչ թէ նրանց երթի ու պայքարի տուրբազուր լինելը, մի յատուութիւն, որով միշտ հպարտ էր ու որպէս յանդիմանութիւն երբեմն յիշեցնում էր սուտ գաղափարակրութեան չնչին ասպետներին բռնկումի ու բարկութեան մոլեգին վայրկեաններին. «Եւ միթէ՞ ես չեղեցիք ձեր կուր, կարմիր ընկերներ...»:

Երգել է, այո, դա նրա ընտրութիւնն էր, բայց ով կարող է մեզ գրել մեր ընտրութեան իրաւունքից: Բանաստեղծի ապրումը եւ այդ ապրումը կրող գեղակերտութիւնը ոչ կրօնական բարեփոխիչի ուսմունք է, ոչ իշխանաւորի քաղաքական հրահանգ, եւ նոյնիսկ նոյնատեսիս, մտում է ու շահագրգռում է արուեստային շրջանակներում որպէս անհատական վկայութիւն, անկախ թեմայից, որ կարող են լինել փոքրահայ պարուհի, յեղափոխական զանգուածները կամ անցեւոր ու ապանքի հետաքրքրութիւնների տուալտանքը:

Կարմիրը մի փոխաբերութիւն է, որ ուղեկցում է մեր բանաստեղծին սկզբից մինչեւ կերթեալագոյն ծիածանի կարմիրից մինչեւ կարմիր սոսնես՝ «Իմաստուն է օրերի վայրագ նահանջը հիմա» (1921): Ապա եւ այն ամէնը, ինչ այսօր կ'ուզենայինք, որ եղած չլինէր: Ի՛նչ փոյթ, եթէ մեր գործը ընտրելն է՝ առանձնացնելով նրա ժառանգութիւնից այն, ինչ բացարձակ օժէք է ներկայացնում, մնացածը թողնելով ժամանակի ծալքերի մէջ ու փոշու դէպի տակ, ի խրախուրի բանաստեղծների եւ հետաքրքրասէր ուրիշների: Չմոռանանք. այն, ինչին հասաւ մեր ժամանակի մտայնութիւնը դարավերջին, բանաստեղծը հասել է իր ընդհատուած ժամանակի նախօրէին, երբ վճռական դարձ է կատարում դէպի իր ակունքը, այնպէս, ինչպէս սկսել էր, ինչպէս պատկերանում էր ինքն իրեն՝ կամաւոր ճորտութիւնից ձերբազատուած, միակ սրբագան բանի՝ «յանուն ձեռք ու խօսքի նուիրեալ. «Եւ սերմնացան աննին՝ դժնի ժամանակի»: Իր լեռան կատարին հասաւ արդիւնք է, աղօթքներից աճեցան ստորգրքը. «Իմ լեռան արդիւնքը» (Մարտ, 1937) եւ վերջին տարիների միւս երկերը՝ «Չուարթ իրտութիւն» պայմանական, աշխատանքային վերջնագրով, անդուրութիւնից փրկուած ու աւաղարտ հմուտ ու վարժ տեքստաբանների տեսական տընութեան:

Իսկ այն պատիկ գաղտնիքը, որն այսօր յայտնի է դարձել՝ որպէս ասուած ճշմարտութիւն, նրա ստուսպալից ապրումների արգասիքն է՝ ընդամենը նրանից յետոյ ու ձեզանից առաջ եկածներին. նա արարելու ու գոհն է փորձարկածն ենթարկուած խորհուրդի, որ չգործեց արուեստայինից դուրս պատճառներով: Բանաստեղծի երգը տարբեր է իշխանութեան ձգտող-

ների տենչանքից. իշխանաւորը տէրն է կեանքի, որ անցողիկ է, իսկ յետոյ նրան վիճակուած է բանաստեղծի լուսնագրութեան մի անկիւնը՝ որպէս պարսաւ կամ զոգ, միեւնոյն է, որովհետեւ թէ՛ գովքը, թէ՛ պարսաւը հետազայում ընթերցուելու է հասարակ տեղիք դարձած այն պարզ ճշմարտութեան տեսանկիւնից, որ մի ժամանակ գաղտնիք էր ու այժմ ցուցադրուած է իր ողջ մեղակութեամբ: Յիրաւի անողորմ կեանք, որ չի խնայում ոչ իշխանութեամբ պսակուածին, ոչ հանճարով շնորհուածին, բայց փրկում է ստեղծուած գեղեցիկը՝ ապրելու ու մտածելու լաւագոյն միջավայրութիւնը:

Ստալինի մահուանից յետոյ տեղի ունեցած նրա պատկազը ընդ որի անհատի Ուրուշուովի քմահաճոյքը չէր, այլ պահանջը ահագնացող հանրային մտքի, որի ձեւաւորմանը այս կամ այն չափով նպաստել են միլիոնաւորների թափած արեան յիշատակի կրողները եւ իրենք՝ ողջակիզածները սխրալից ահագանգումների իրենց կատակով:

Եղիշէ Չարենցը՝ դարի մուսետիկը, որի աստեղային ժամը շառագունեց ծիածանի բուրբերաններով, մեր կեանքին վիճակուած ամենից զղբիւնների ազդարարութեամբ, մարդկային հոգիների սպիտակափառ տուալտանքի ցոլքերով, ի գիտութիւն, ի պահ եւ ի վայելում ապրողների, որ կան եւ որ լինելու են՝ նրա խօսքով արբեցած ու նրա փորձով հասունացած:

Միակը, անկրկնելի, բացառիկ, մեր բանաստեղծութեան նոր դարաշրջանը, նորահաստ սկիզբը, սկզբնաւորելու բերկանքը, բերկանքները ամենաբարձրակի:

Ինչքան անմասն կը լինէր քառերորդ դարը, եթէ անուած չլինէր Եղիշէ Չարենցը: Նրա ներկայութիւնը վսեմ ողբերգականութեան շունչ է հաղորդում ծաղրածուների, հապիտներին ի ինքնակատակներին մեր դարին, որի ճակատի վրայ բազմած անունները՝ Մուսետիկից ու Լեւնինից մինչեւ Տրոյցիկ ու Հիթլեր, եւ զեռ անհամար կասեաններ, իրենց գաճաճ անպարտութեամբ հեղեղեցին ասպարհզ ու չբացան, մարդկանց թողնելով ամօթի ու հիաստպիւրութեան, գաւեթտական մորմոքի ու կատաղի անզօրութեան քմահաճոյքին: «Եւ մեղսաւոր քերթողս աստուածաբալ դարի»:

# ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՇԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻՉ

ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



## ԱԿՆԱՐԿ

### ԽՈՐՀԱԿԻՆ ԴԷՄ

«Թրքիչ ֆորում»ի հերթական տեղեկագիրը է ե-նամակառուցված: Միջազգային մամուլին քաղաքացիական շարժումը, որոնք կ'անդրադառնան Հայկական Յեղասպանության ուրացումի թուրքիչ քաղաքականության եւ իւրաքանչիւր յօդուածի տակ, տուեալ թերթի խմբագրական ֆաքսի, ե-նամակի եւ փոսթի հասցէները եւ կոչ «ֆորում»ի 300 հազար անդամներուն՝ պատասխանելու «հակաթուրք» այս ամբաստանութիւններուն:

Երկարաշունչ ե-նամակը կը շարունակուի թանկեր Արշամի կատարած մէկ դասախօսութեան լրատուութեամբ: Կը բացատրուի, թէ թանկեր Արշամ կ'ընդունի Հայկական Յեղասպանութեան իրողութիւնը, եւ ապա կը տրամադրուի անոր համալսարանի եւ անձնական հասցէները, որոնց տակ գրուած է՝ «պատասխանեցէ քղաւանան»:

Բնականաբար տեղեկագիրը ունի նաեւ «խմբագրական» մը, ուր «կ'ուսումնասիրուի» «Յեղասպանութիւն» բառին նկատմամբ հայերու «բարդութիւնը», կը յիշուի թրքական լուսինի յաղթանակները, հրեական լուսինի հետ գործակցութեան օրինակներ, քարոզչութիւն, հակաքարոզչութիւն, ուրացում, հայերը Օսմանեան կայսրութեան մէջ «յատուկ հոգատուութեան» կ'ենթարկուէին, հայերը բարձրաստիճան պաշտօնատարներ ունէին պետութեան մէջ, հայերը դաւանանքային, հայերը ջարդեցին, այսօր ալ հայերը կ'ուզեն թուրքներ վարկաբեկել...

«Թրքիչ ֆորում»ի տեղեկագիրներ շարքը երեք - չորս անգամ կ'ուղարկուի հարիւր հազարաւոր թուրք «աքթիվիստներու»: Բազմաթիւ այլ թրքական կազմակերպութիւններ, պետական ուղղակի թէ անուղղակի հովանաւորութեամբ, համացանցի միջոցով թրքական ուրացումի թեզը կը ներկայացնեն աշխարհին, աշխատանքի կը լծեն տարբեր երկիրներու մէջ թրքական խմբաւորումներ, տեղեկութիւններ կը փոխանցեն թուրք դեպիպաններու, թէ ի՞նչ նախձեռնութիւններ կը կատարուին հայերու կողմէ, ուր պետք է հակադարձել եւ ի՞նչպէս:

Այս բոլորին վրայ կ'աւելնան թուրք պետութեան քարոզչութեան, տեղեկահաւաքի, դիւանագիտական կապերու եւ լուսինի պաշտօնական մեքենաները, որոնք բազմաթիւ երկիրներու մէջ իրենց դիւանագիտները կը գործուղեն նշում րանցներու, «խօսք հասկցներու», ի հարկին «դաշնակից» լուսիններու դիմելու, օտար պատմաբաններ գիւնուորագրելու, խորհրդատուներ կազմակերպելու, մամուլի հաղորդագրութիւններ հրատարակելու եւ այլն...

Թուրքիչ մէջ կը պատրաստուի նոր սերունդ մը, որ կը դաստիարակուի թրքական ուրացումի վարկածներով եւ կամայ թէ ակամայ ընդվզում եւ առեւտրութիւն կը սնուցանէ հայերու նկատմամբ, որոնք իր սիրելի պետութիւնը «անարդարօրէն» կ'ամբաստանեն իբրեւ ցեղասպանի յաջորդ եւ հատուցում կը պահանջեն: Թուրքիչ կրթական համակարգի «ընդհանր», վաղը այս երիտասարդութիւնը, յանուն «արդարութեան», ցոյցեր պիտի կազմակերպէ, ցեղասպանութեան յուշարձաններ պիտի սրբապղծէ եւ, իր կարգին, պիտի շարունակէ գերարդիական բոլոր միջոցներով պայքարելու Հայկական Յեղասպանութեան նախնային պայքարողներու աշխատանքներուն դէմ:

